ՀՏԴ 32 (479.25/243) *Քաղաքագիտություն*

Գուրգեն Սիմոնյան, բ.գ.թ.,
ՀՌՀ Իրավունքի եւ քաղաքականության ինստիտուտ,
քաղաքագիտության բաժին
gurgensimonyan4@gmail.com

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԻՆՏԵԳՐԱՑԻՈՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՐԴԻԱԿԱՆԱՑՈՒՄԸ ԵՎ ԱՐՑԱԽՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴՐԻ ՀԱՆԳՈՒՅԱԼՈՒԾՄԱՆ ԱՅԼԸՆՏՐԱՆՔԸ

Պետականաշեն հատկանիշը հայ ազգի բազմաթիվ բնութագրիչներից մեկն է. հայերը միշտ աչքի են ընկել սեփական ճակատագիրը ինքնակամ տնօրինելու կամքով:

Ազգը, որը ունակ է ստեղծել ազգային շահերի ծիրում արդյունավետ գործառնվող քաղաքական ինստիտուտներ, սովորաբար, միջազգային հարաբերություններում ձգտում է դառնալ ազդեցիկ դերակատար: ՈՒստի քաղաքական ազգը պետք է կարողանա դուրս գալ հին կարծրատիպերից և, արդիականանալով, պատասխանել հետևյալ տեսական հարցին. «որքանո՞վ է արդյունավետ հայկական պետության միատարր տիպը»:

Բանալի բառեր. Ազգ, համախմբում, ազգ-պետություն, դաշնություն, էթնոքաղաքակա-նություն, արդարություն, ինքնորոշում, անվտանգություն, հովանավորչություն, դաշինք:

Гурген Симонян, к.п.н.,
РАУ Институт Права и Политики,
кафедра политологии

МОДЕРНИЗАЦИЯ ИНТЕГРАЦИОННОЙ ПОЛИТИКИ АРМЕНИИ И АЛЬТЕРНАТИВНЫЙ СПОСОБ РАЗРЕШЕНИЯ АРЦАХСКОЙ ЗАДАЧИ

Государствостроительное свойство - одно из многочисленных характеристик армянской нации: армяне всегда выделялись волей самостоятельно распоряжаться собственной судьбой.

Нация, которая способна создавать в рамках национальных интересов эффективно действующие политические институты, как правило, в международных отношениях стремится стать влиятельным актором. Следовательно политическая нация должна суметь выйти из устаревших архетипов и, совершенствуясь, ответить на следующий теоретический вопрос: «насколько эффективен унитарный тип армянской государственности?».

Ключевые слова: *нация, консолидация, нация-государство, федерализм, этнополитика, справедливость, самоопределение, безопасность, протекционизм, союз.*

Gurgen Simonyan, Ph.D.,
RAU Institute of Law and Politics,
Department of Political Science

THE MODERNIZATION OF ARMENIA'S INTEGRATION POLICY AND ALTERNATIVE METHOD OF PERMISSION OF THE ARTSAKH OBJECTIVE

Key words: nation, consolidation, nation-state, federalism, ethnopolitics, justice, self-determination, security, protectionism, union.

The state-building feature is one of the many characteristics of the Armenian nation: Armenians have always stood out by their own will to decide their own destiny.

A nation that is able to create in the national interest effectively acting political institutions, as a rule, in international relations seeks to become an influential actor. Therefore, a political nation must be able to get out of the old archetypes and, improving, answer the following theoretical question: "how effective is a unitary type of Armenian statehood?".

«Եվ չի լինի ո՛չ քուն, ո՛չ դադար մինչև այն պահը, երբ Մեծ Հայքի՝ մեր նախնիների տերության, նախկին տիրույթները չվերականգնեմ: Այդ ժամ նաև արքայից արքայի հին թագը վերականգնելու մասին մտածելու իրավունք կստանանք»[1] *(Զաքարե Զաքարյան Բ Երկայնաբազուկ)*

Հայաստանի Հանրապետությունում խորհրդարանական կարգի հաստատումը պետական իշխանության հավասարակշռման և ժողովրդավարական արժեքների ամրապնդման տեսանկյունից նոր հարցադրումների պատճառ է դարձել: Պայմանավորված Հայաստանի ազգային շահերով, անհրաժեշտ է համակողմանի վերլուծության ենթարկել հայկական պետության արժեքաբանական ընկալումներին համահունչ պառլամենտարիզմի տեղայնացման հիմնախնդիրը: Այդ խնդրի լուծման համար անհրաժեշտ է համախմբել երկրի ամբողջ քաղաքագիտական ներուժը և, պայմանավորված ազգային շահերի արդիականացմամբ, բարեփոխել հայկական քաղաքական ինստիտուտների կառուցվածքային և իմաստային նշանակությունը համապատասխան նոր ժամանակների պահանջներին:

Արտաքին և ներքին մարտահրավերները ժամանակի ընթացքում կրում են քանակական և որակական փոխակերպումներ, հետևաբար ազգային շահերի արդիականացման գործընթացը պետք է ունենա շարունակական բնույթ:

Բազմադարյա կենսափորձ ունեցող հայ ազգը բազմիցս համոզվել է, որ ազգային անվտանգության ապահովման համար չկա ավելի հուսալի և կայուն միջոց, քան ինքնիշխան պետությունն է[2]: Դա է պատճառը, որ ազգը իր գոյության ակունքներից ի վեր աչքի է ընկել պետականաստեղծ ձիրքով, իսկ պետության կորստի պարագայում, երբեք բաց չի թողել պատմական շանսը ինքնիշխանությունը կրկին վերանվաճելու համար, անգամ, եթե դա զուգորդվել է թանկ կորուստներով:

Սա է պատճառը, որ հայ ազգը եղել և մնում է քաղաքական ազգ: Անգամ Հայաստանը նվաճած կայսրությունների ծիրում հայերը եղել են պետական, գիտական, ռազմական և մշակութային ծանրակշռի դերակատարներ: Վերոգրյալը վկայում է, որ ինքնիշխան Հայաստանը ամենից արդյունավետ միջոցն է ազգային անվտանգության և պատմական հայրենիքում հայ ազգի բնականոն կեցության ապահովման համար: Քաղաքական ազգը սեփական ազգային շահերի ապահովման համար կարող է անարգել համախմբվել և հանրային ներուժը նպատակային ուղղորդել միայն անկախ պետության պարագայում:

ՈՒստի պետական ինստիտուտի արդիականացման հիմնախնդիրը պետք է լինի օրակարգային հարց: Այս առումով ստեղծված ներքաղաքական, սահմանադրահիրավական իրողությունը, ինչպես նաև տարածաշրջանային և համաշխարհային քաղաքականության կերպափոխումները ստիպում են քննարկման առարկա դարձնել հայկական միատարր պետության և վերջինիս դաշնային հեռանկարին վերաբերող գիտակիրառական հարցը:

Հայաստանի Դաշնային Հանրապետության կայացման հեռանկարը ավելի գրավիչ է, երբ այն դիտարկվում է արցախյան հիմնախնդրի կարգավորման այլընտրանքային լուծումներ փնտրելու և տարածաշրջանային գրագետ էթնոքաղաքականության վարման համատեքստում:

Պատմությունից գիտենք, որ Հայոց արքա Արտաշես Բարեպաշտը մ.թ.ա. 189-160 թ.թ., իրականացրել է բարեփոխումների լայնածավալ քաղաքականություն:

Արտաշես Աշխարհակալը՝ արդիականացնելով Հայկական թագավորության վարչա-տարածքային կառուցվածքը, երկիրը բաժանեց 120 ստրատեգիաների, դրան զուգահեռ երկրի պաշտպանական քարտեզը բաժանելով 4 բդեշխությունների:[3] Ի տարբերություն իշխանների, բդեշխները օժտված էին կանոնավոր բանակ ունենալու իրավունքով: Դա արվել էր երկրի

[1] Вермишев Г. Х. Амирспасалар. Исторический роман. Книга II. Серия «Армянский исторический роман». М.: ЮниПресс СК, 2006, с. 20.

[2] Գուրգեն Սիմոնյան: Անկախությունն որպես հայկական քաղաքակրթության կենսական սկզբունք (էջ 150-158): «Հանրային կառավարում» գիտական հանդես: Երևան: «Տիգրան Մեծ» հրատ., N 3, 2012, էջ 171:

[3] Մեր հաղթանակները. Հ.1. Եր.: Նորավանք, 2008, էջ 162:

պաշտպանունակությունը բարձրացնելու համար: Թշնամու անակնկալ հարձակման դեպքում բդեշխը իր բանակով կասեցնում էր հրոսակների առաջխաղացումը մինչև Արքան կժողովեր Աշխարհազորը:[1]

Ակնհայտ է, որ անտիկ Հայաստանում շեշտադրվում էր արդյունավետ և կազմակերպված տեղական ինքնակառավարման մարմինների դերը, որը 21-րդ դարում հանդիսանում է ժողովրդավարական կարգի կարևորագույն բաղկացուցիչներից մեկը:

Հայտնի է, որ Արտաշես Բարեպաշտի բարեփոխումները հետագայում կիրառվել են Արքայից Արքա Տիգրան Մեծի կողմից Հայկական Կայսրության կայացման տարիներին:

Կարծում եմ արժե համակողմանի և ընդարձակ ուսումնասիրության ենթարկել վարչատարածքային բաժանման դաշնային ձևը, քանի որ խորհրդարանական կարգերի հաստատման պայմաններում, ՀՀ վարչատարածքային կառուցվածքի արդիականացումը կարող է դուրս բերել Հայաստանը որակական նոր, ավելի ուժեղ հարթություն:

Հաշվի առնելով այն, որ գործող Սահմանադրությամբ ՀՀ Նախագահը[2] այլևս չունի սահմանադրաիրավական որևէ լծակ պետական իշխանության հավասարակշռությունը վերահսկելու համար, անհրաժեշտ է ձևավորել խորհրդարանական վերահսկողություն:

Հայկական երրորդ պետության հիմնարկեքը արձանագրող անկախության հռչակագրում հստակ ամրագրված է, որ Հայաստանում հաստատված ժողովրդավարությանը համապատասխան, ժողովրդի իշխանության մարմնացումն ու ժողովրդի անունից հանդես գալու իրավունքը վերապահված է բացառապես երկրի խորհրդարանին. « 3. Հայոց պետականության կրողը Հայաստանի Հանրապետության ժողովուրդն է, որն իր իշխանությունը իրագործում է անմիջականորեն և ներկայացուցչական մարմինների միջոցով՝ Հայաստանի Հանրապետության սահմանադրության և օրենքների հիման վրա: Հանրապետության ժողովրդի անունից հանդես գալու իրավունքը պատկանում է բացառապես Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդին:»3:

Խնդիրն այն է, որ միապալատ խորհրդարանի պայմաններում պետության եռաթև իշխանության հավասարակշռության պահպանումն ու վերահսկողությունը չի կարող լինել օբյեկտիվ:

ՈՒստի Դաշնային կառավարման համակարգը, հնարավորություն կնձեռի Հայկական 4-րդ պետությանը ոչ միայն զարգացնել տեղական ինքնակառավարման մարմինները, պայմանավորված տվյալ սուբյեկտի՝ Նահանգի կամ Հանրապետության, տնտեսական, ազգակրական, կլիմայական և ռազմավարական առանձնահատկություններով, այլև ձևավորել երկպալատ պառլամենտարիզմ, որի երկրորդ պալատը կվերահսկի ու կհավասարակշռի պետության իշխանությունը՝ պահպանելով Սահմանադրական կարգի կենսունակությունը: Այն իր մեջ ներառում է ինտեգրացիոն հսկայածավալ ներուժ, որի դրոշի ներքո կրկին կվերամիավորվի Արցախը՝ պահպանելով պետականության այն բաղադրիչները, որոնք դեֆակտո ունի այսօր:

Շատերի մոտ Դաշնությունը նույնացվում է Ռուսաստանին, որն իր պետական և տարածքային կառավարման մշակույթով այնքան էլ օրինակելի չէ: Որպես օրինակներ կարելի է դիտարկել այնպիսի հաջողված երկրներ, ինչպիսիք են՝ Ավստրիան, Գերմանիան, ԱՄՆ, Կանադան, Շվեյցարիան և այլն:

Հայկական պետական ինստիտուտների և դրանց ծիրում առկա քաղաքական աշխարհընկալման բազմակիությունը դարեր ի վեր փրկել են Հայաստանը իսպառ ոչնչացումից:

Երբ 11-րդ դարում Սելջուկ թուրքերը ասպատակում են հայկական լեռնաշխարհը, հայերի համար սկսվում են «սև» օրեր, մինչև 12-րդ դարում Զաքարյանների իշխանական տունը վրաց Բագրատունիների օրոք հայ-վրացական բանակի միջոցով ազատագրում են Մեծ Հայքի Այրարատ, Գուգարք, Տայք, Սյունիք և Արցախ նահանգները, ինչպես նաև Վասպուրականի և Ուտիքի մի մասը:

Իսկ արդեն թաթար-մոնղոլական կայսրության ժամանակ արձնագրվեց աներևակայելի սխրագործություն, որը մտավ համաշխարհային պատմության մեջ իբրև եզակի դեպք: Խոսքը

[1] Նույն տեղում, էջ 163:

[2] ՀՀ Սահմանադրություն (ընդունվել է 06.12.2015 թ.) http://www.parliament.am/parliament.php?id=constitution

[3] Հայաստանի անկախության հռչակագիր (ընդունված 23.08.1990 թ.) http://www.gov.am/am/independence/

Կիլիկիայի Հայկական Թագավորության և Մոնղոլական կայսրության միջև կնքված եզակի, հավասարազոր իրավունքներով և պարտականություններով հայտնի պայմանագրի մասին է:

1236–1245 թվականներին մոնղոլական զորքերը գրավել էին գրեթե ամբողջ Մերձավոր Արևելքը բացի Կիլիկիայի Հայկական Թագավորությունից: Հենց այդ տարիներին էր, որ դիվանագիտական տաղանդով և քաջությամբ է աչքի ընկնում Կիլիկիայի Հեթում Ա թագավորը, որը մոնղոլ Մանգու խանի հետ համաձայնություններ է ձեռք բերում ոչ միայն Կիլիկիայի, այլև Մոնղոլ տիրապետության տակ հայտնված Մեծ Հայքի վերաբերյալ[1]: Ստացվեց, որ հայ ազգի քաղաքական ինստիտուտների բազմակիությունը ապահովագրեց ազգի անվտանգությունը:

Դաշնային կառավարման պայմաններում էլ դաշնության սուբյեկտները՝ չհակասելով Դաշնային Հանրապետության Սահմանադրությանը, կարող են ունենալ միմյանցից տարբերվող իրավաքաղաքական համակարգեր՝ փոխլրացնելով, հարստացնելով և ուժեղացնելով միացյալ Հայաստանի պետական համակարգը:

Ամենայն հավանականությամբ 192 ճանաչված պետությունների թվաքանակի աճ երկրորդ հայկական պետության հաշվին չի արձանագրվի, քանի որ բազմաթիվ ռազմաքաղաքական խնդիրներ ունեցող Հայաստանին ՄԱԿ-ում երկրորդ օժանդակող ձայնով օժտելը դժվար թե բխի մի շարք ուժեղ դերակատարների շահերից և սա նաև այն ատճառով, որ Հայաստանը դեռևս շարունակում է միջազգային հանրության աչքում մնալ որպես Ռուսաստանի, այն է թե Արևմուտքի արդեն իսկ բացահայտ հակառակորդի, «կամակատար»: Հետևաբար ազատագրված տարածքներով Արցախի Հանրապետությունը կարող է, միջազգային իրավունքի նորմերին համապատասխան, ինքնորոշվել և դառնալ Հայաստանի մաս: Այսինքն հայկական պետության կազմում Արցախի Հանրապետության կարգավիճակով: Որպեսզի միջազգային հանրությունը ականջալուր լինի Արցախի 150 000 հայության պահանջին, պետք է այդ պահանջը ձևակերպել ընդունելի կերպով: Արցախի Հանրապետության ինքնիշխանության ճանաչումը՝ ստեղծելու է նոր, անկանխատեսելի հետևանքներով լի իրականություն, որին միջազգային հանրությունը՝ ելնելով հետխորհրդային աշխարհի ճարտարապետության կոնյուկտուրայից, դեռևս պատրաստ չէ ու դժվար թե ռազմավարական ապագայում պատրաստ լինի: Մինչդեռ առաջարկվող ձևաչափը նոր չէ, այն արդեն իսկ գոյություն ունեցող իրավիճակին իրավաքաղաքական արտահայտություն տալն է, որով գոնե մեզ համար մեկընդմիշտ կփակի «արցախյան հիմնահարցը»:

Արցախի Հանրապետությանը չի կարելի մասնատել, կամ վերջինիս ինքնիշխանությունը առգրավելով, դարձնել մարզ Հայաստանի Հանրապետության կազմում: Նմանատիպ քաղաքականությունը կթուլացնի հայկական պետության ներուժը՝ խոչընդոտելով «ՈՒժեղ պետության» կայացմանը:

Շահեկան է, եթե, օրինակ՝ Սյունիքի, Այրարատի, Գուգարքի Նահանգներին, ինչպես նաև Գարդմանին (որից մեկ «ոտատեղ» տարածք է մնացել ներկայիս Հայաստանի Հանրապետությունան Տավուշի և Գեղարքունիքի մարզերում) զուգահեռ Հայաստանի Դաշնային Հանրապետության կազմում ներառվի նաև Արցախի Հանրապետությունը, որտեղ ի տարբերություն Նահանգների ինքնակառավարման ձևի, կառավարումը կլինի նախագահական, ինչպես որ կա այսօր (Տե՛ս քարտեզ 1):

[1] Հայկական Սովետական Հանրագիտարան: Հատոր 6: Եր., ՀՍՍՀ Գիտությունների Ակադեմիա, 1980, էջ 197:

Քարտեզ 1



Այսպիսի ձևաչափը հատուկ չէ միատարր պետություններին, ինչպիսին հանդիսանում է Հայաստանի Հանրապետությունը, ուստի խնդրի լուծման համար շատ ավելի հեշտ կլինի Սահմանադրական փոփոխության ենթարկել վարչատարածքային կառուցվածքին վերաբերող նորմերը և հռչակել Հայաստանը իբրև Դաշնային Հանրդապետություն:

Արդեն 27 տարի է, ինչ դեֆակտո Հայաստանը Դաշնություն է, ունենալով իր կազմում Արցախի Հանրապետությունը. Արցախի քաղաքացիները ունեն Հայաստանի Հանրապետության անձնագրեր, շրջանառվող փողը դրամն է, պաշտպանությունը իրականացվում է ամբողջ հայկական ներուժով, տեղի է ունենում վերնախավի ազատ շրջանառություն, բանակցային գործընթացում հանդես է գալիս պաշտոնական Երևանը և այլն:

Փաստացի ունենք Դաշնություն, սակայն ներկայանում ենք իբրև միատարր պետություն և միջազգային հանրությունից պահանջում ենք այն, ինչը դժվար թե երբևէ իրականանա: Մինչդեռ, միջազգային հանրությունը ավելի իրակտեսական կհամարի Արցախի Հանրապետության ինտեգրումը Հայաստանին, խուսափելով տարածաշրջանի հավելյալ մանրացման տնտեսապես ոչ շահավետ և դժվարին քաղաքականությունից:

Հարցի մյուս կողմը վերաբերում է ռազմավարական ապագային:

Ադրբեջանի Հանրապետության առկա ձևաչափը ուղիղ սպառնալիք է Հայաստանի անվտանգությանը: Եթե մի պետության առաջին դեմքի մակարդակով մեր ինքնությունը հերքող և մեր ապագան կասկածի տակ դնող անպատասխանատու հայտարարություններ են հնչում[1], ապա այդ երկրի ապամոնտաժման քաղաքականությունը պետք է դառնա Հայաստանի Հանրապետության ազգահ շահ:

Եթե հաջողվի ներկայիս ադրբեջանական, ազգային ինքնագիտակցություն չունեցող հասարակությանը համոզել, որ նրանք ոչ թե ադրբեջանցի այլ մերձավորարևելյան բնիկներ են, ապա Ադրբեջանը կփշրվի Ավարստանի (դա հին Աղվանքն է), Թալիշ-Մուղանյան Հանրապետության (իր Լենքորան մայրաքաղաքով), Լեզգիստանի, ինչպես նաև Բաքվի, կամ Ափշերոնի թաթարական ինքնավար մարզի, որոնցից շատերը կարող են ներառվել Հայստանի Դաշնային Հանրապետության ինտեգրացիոն պրոցեսի մեջ:

Ցանկացած Սահմանադրություն, իր մեջ պետք է ունենա ոչ միայն ռացիոնալ մեր առօրյա կյանքը և գործող կարգը բնութագրող դրույթներ, այլև **պրակտոպիստական**, որոշ դեպքերում էլ **ուտոպիստական** նորմ ցանկություններ: Ուստի վարչատարածքային բաժանման դաշնային ձևը

[1] https://rusarminfo.ru/2018/02/09/my-dolzhny-vernut-erevan-aliev/

հնարավորություն է ընձեռում տեսական ապագայում երկրի քաղաքական, մշակութային և քաղաքակրթական սահմանների ընդարձակում կողմնացույցի բոլոր ուղղություններով, Ընդհուպ մինչև Մեծ Հայքի սահմանների վերականգնում: Այս պարագայում մնում է լուծել երեք հիմնախնդիր՝ դեմոգրաֆիական («բնությունը դատարկ տարածութիւն չի սիրեր, կը լեցուի ուրիշով եթէ լիքը չէ»)[1], տնտեսական և դիվանակիտական, քանի որ իրավաքաղաքական համակարգը լիովին պատրաստ կլինի Մեծ Նպատակների իրագործմանը:

Լինելով հնագույն քաղաքակրթություններից մեկը, ցանկանում ենք միջազգային հարաբերություններում հանդես գալ որպես լիիրավ սուբյեկտ: Իսկ միջազգային հարաբերություններում սուբյեկի կարգավիճակով հանդես եկող պետությունները, ոչ միայն պատասխանում են տարբեր մարտահրավերներին, այլև հարկ եղած դեպքում հանդիսանում են բազմաբնույթ մարտահրավերների հեղինակներ:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Հայկական Սովետական Հանրագիտարան: Հատոր 6: Եր., ՀՍՍՀ Գիտությունների Ակադեմիա, 1980, էջ 720 էջ:
2. Մեր հաղթանակները. Հ.1. Եր.: Նորավանք, 2008, 260 էջ:
3. Շիրինյան Լ.Ղ. Ռուբեն. Հայաստանի վերակերտումի ռազմավարությունը: (Երկրաքաղաքական վերլուծություն). Եր., Զանգակ-97, 2004, 188 էջ:
4. Սիմոնյան Գ.Է. Անկախությունն որպես հայկական քաղաքակրթության կենսական սկզբունք (էջ 150-158): «Հանրային կառավարում» գիտական հանդես: Երևան: «Տիգրան Մեծ» հրատ., N 3, 2012, էջ 171:
5. Вермишев Г. Х. Амирспасалар. Исторический роман. Книга II. Серия «Армянский исторический роман». М.: ЮниПресс СК, 2006, 272 с.
6. http://www.parliament.am/parliament.php?id=constitution
7. http://www.gov.am/am/independence/
8. https://rusarminfo.ru/2018/02/09/my-dolzhny-vernut-erevan-aliev/

[1] Շիրինյան Լ.Ղ. Ռուբեն. Հայաստանի վերակերտումի ռազմավարությունը: (Երկրաքաղաքական վերլուծություն). Եր., Զանգակ-97, 2004, էջ 169: